ANNUAL REPORT

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Տարեկան հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գյուտեր եւ օգտակար մոդելներ 7

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ 9

Ֆիրմային անվանումներ 11

Տեղեկատվություն եւ կոմպյուտերացում 11

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի գրանցում 13

Իրավական դաշտ 14

Միջազգային համագործակցություն 14

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից

Խմբագրական կոլեգիա Սարգիս ՂԱՆԹԱՐՋՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Մանվել ԲԱԲԱՅԱՆ
Գոհար ԱԴԱՄՅԱՆ
Դիզայն եւ էջատում Նաիրա ԱՆԱՆՅԱՆ

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
Internet: http://www.armpatent.org
E-mail: armpat@cornet.am

© *Հայարտոնագիր*

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանում լիովին կատարվել է ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության 2001թ. աշխատանքային ծրագիրը, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2001թ. մարտի 9-ի № 167 որոշմամբ հաստատված ցանկում ներառված միջոցառումները:

ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության հարցերով աշխատանքները 2001թ. իրականացրել է ամբողջ ծավալով եւ էապես համալրել պետական բյուջեն: Մասնավորապես, պետական բյուջե մուտքագրվել է 166191.0 հազ. դրամ (կանխատեսված 112 մլն. դրամի դեպքում), այդ թվում՝ գյուտերի եւ օգտակար մոդելների իրավական պահպանության գծով՝ 24099.5 հազ. դրամ, ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների իրավական պահպանության գծով՝ 75508.7 հազ. դրամ, ֆիրմային անվանումների իրավական պահպանության գծով՝ 36254.0 հազ. դրամ, բողոքների քննարկման գծով՝ 3014.7 հազ. դրամ, պետական գրանցամատյանների վարման գծով՝ 16713.7 հազ. դրամ, զիջման մասին եւ լիցենզային պայմանագրերի գրանցման գծով՝ 10322.2 հազ. դրամ, այլ գործողությունների գծով՝ 278.2 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանը նշանավորվեց նրանով, որ առաջին անգամ 2001թ. ապրիլի 26-ը նշվեց որպես Մտավոր սեփականության միջազգային օր: Այդ կապակցությամբ վարչությունը Հեղինակային իրավունքի ազգային գործակալության հետ համատեղ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում անցկացրեց հանդիսավոր նիստ:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել վարչության խորհրդի 6 նիստ եւ բողոքարկման խորհրդի 6 նիստ:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2001թ. ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն է ներկայացվել 155 գյուտի եւ 13 օգտակար մոդելի հայտ, որոնցից 153-ը՝ ազգային հայտատուներից (աղյուսակ 1): 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 1684:

Աղյուսակ 1

Երկիրը	2000	2001
Հայաստան	120	153
Այլ երկրներ	8	15
Ընդամենը	**128**	**168**

2000 թ. համեմատությամբ 2001թ. նկատվում է ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակի որոշակի աճ (2000 թ. 120 հայտի դիմաց՝2001թ. 153 հայտ): Օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նույնպես աճել է (2000թ. 8-ի դիմաց՝2001թ. 15):

Օտարերկրյա հայտատուներից ստացված 15 հայտերից 7-ը ներկայացվել է Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) շրջանակներում:

Միեւնույն ժամանակ 2001 թ. զգալիորեն աճել է ազգային հայտատուների կողմից ներկայացված գյուտերի միջազգային հայտերի թիվը: Եթե 1994-2000 թ.թ. ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ԺՆԵւ) միջազգային բյուրո ներկայացվել է 12 գյուտի միջազգային հայտ, ապա միայն 2001 թ. ներկայացվել է 15 գյուտի հայտ:

2001թ. ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 1-ում:



A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Նկ. 1

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես նախորդ տարիներին, ավելացել է A եւ C բաժիններին վերաբերող հայտերի քանակը:

Հաշվետու ժամանակաշրջանում՝

- *322 հայտերով անցկացվել է փորձաքննություն.*
- *23 հայտերով անցկացվել է կրկնական փորձաքննություն.*
- *148 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, եւ ընդունվել է որոշում այդ հայտերի պաշտոնական հրապարակման մասին.*
- *24 հայտերով անցկացվել է ըստ էության փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին.*
- *142 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում ընդունվել են որոշումներ 10 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին.*
- *3 հայտով որոշումներ են ընդունվել արտոնագիր տալը մերժելու մասին.*
- *16 հայտերով որոշումներ են ընդունվել հայտի հետ կանչման մասին:*

Հայտերի քննարկման արդյունքները բերված են նկ. 2-ում:



Նկ. 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2001թ. ազգային ընթացակարգով Հայարտոնագիր է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 806 հայտ (այդ թվում՝ 407-ը ազգային հայտատուներից):

756 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հայտատուների կողմից հետ է կանչվել 17 հայտ, իսկ 25 հայտերով մերժվել է ապրանքային նշանների գրանցումը: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել են 759 ապրանքային եւ սպասարկման նշաններ, որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է նկ. 3-ում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2442 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 455, իսկ վերջնական մերժման մասին՝ 208 միջազգային գրանցումներով:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

2000թ. համեմատությամբ 2001թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը զգալիորեն նվազել է՝ 2000թ. 510 հայտի դիմաց՝ 2001թ. 407 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն նվազել է ազգային ընթացակարգով՝ 2000թ. 412-ի դիմաց՝ 2001թ. 399, իսկ Մադրիդյան համաձայնագրի շրջանակներում մի փոքր աճ է գրանցվել՝ 2000թ. 2342-ի դիմաց՝ 2001թ. 2442: Ակտիվության նման պատկերը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում տարվող տնտեսական քաղաքականությամբ եւ Հայաստանը մեծ շուկա չլինելու փաստով:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայարտոնագիր է ներկայացվել արդյունաբերական նմուշի 2 հայտ:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	407	-	407
ԱՄՆ	172	-	172
Ավստրիա	-	66	66
Բենիլյուքս	-	206	206
Բուլղարիա	42	24	66
Գերմանիա	14	360	374
Դանիա	1	16	17
Եգիպտոս	-	3	3
Թուրքիա	11	32	43
Ինդոնեզիա	12	-	12
Իսպանիա	2	57	59
Իտալիա	5	234	239
Լեհաստան	-	22	22
Կորեայի Հանրապետություն	5	-	5
Հունգարիա	2	203	205
Ճապոնիա	9	24	33
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	31	42	73
Նիդեռլանդներ	22	-	22
Նոր Զելանդիա	3	-	3
Շվեդիա	1	-	1
Շվեյցարիա	8	416	424
Չեխիա	-	29	29
Չինաստան	1	38	39
Պորտուգալիա	-	3	3
Ռուսաստանի Դաշնություն	10	69	79
Սլովենիա	-	6	6
Վրաստան	1	-	1
Ուկրաինա	-	9	9
Ֆրանսիա	2	237	239
Այլ երկրներ	45	346	391
Ընդամենը	**806**	**2442**	**3248**

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Հայարտոնագիր է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 4687 հայտ:

Գրանցվել է ընդամենը 4680 անվանում, որոնցից 8-ը՝ 2000թ. հայտերով, մերժվել է 14-ը: Ստացված հայտերից 2001թ. հունվարի 1-ի դրությամբ ընթացքի մեջ է եղել 1 հայտ:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի № 289 որոշման, ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 22 թույլտվություն, որը 2000թ. համեմատությամբ 1-ով ավելի է:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՊՅՈՒՏԵՐԱՅՈՒՄ

2001թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ №1 (13), №2 (14), №3(15) եւ №4 (16). վերջին համարը՝ էլեկտրոնային տեսքով լազերային սկավառակի վրա: Տեղեկագրերը հրատարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 138 գյուտի, 5 օգտակար մոդելի, 4 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, ինչպես նաեւ 705 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին: Տեղեկագրերում հրապարակվել են «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» եւ «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Հրապարակվել են նաեւ Գյուտի արտոնագիր ստանալու հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոնները եւ Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոնները:

«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 24 -րդ հոդվածի համաձայն գյուտի հայտի պաշտոնական հրապարակման եւ համընդհանուր ծանոթացման դնելու նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հրատարակվել է Հայարտոնագրի 2000թ. տարեկան հաշվետվությունը:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են ՀՀ գիտատեխնիկական տեղեկատվության ԳՀԻ գրադարան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան եւ ազգային գրապալատ:

Վարչությունը շարունակել է իրականացնել Գիտատեխնիկական գրադարանի արտոնագրային ֆոնդի համալրումը, ինչը, գրադարանի տնօրենի կարծիքով, հնարավորություն է տվել «ողջ Հարավային Կովկասում ստեղծել միակ գրադարանը, որը թույլ է տալիս արտոնագրային որոնմանն առնչվող ցանկացած գործողություն իրականացնել տեղում»:



Նկ. 4

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, Հայարտոնագիրը պաշտոնական տեղեկագրերի 22 օրինակ եւ տարեկան հաշվետվության 23 օրինակ ուղարկել է օտարերկրյա պետությունների արտոնագրային



Նկ. 5

Նկ. 6

գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Համաձայնեցվել է «Լազերային սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագիրը շահագրգիռ նախարարությունների հետ, որից հետո 2001թ. մայիսի 22-ին այն ստորագրվել է Մոսկվայում, որտեղ որոշվել է պատրաստել առաջին փորձնական սկավառակը: Անհրաժեշտ բոլոր նյութերը պատրաստվել են եւ փոխանցվել Ռոսպատենտ:

Դրա հետ մեկտեղ շարունակվել են վարչության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Մշակվել են ՀՀ արտոնագրային վարչության տեղեկատվական համակարգի «Գյուտերի եւ օգտակար մոդելների» ենթահամակարգի եւ համակագրության հիմնապաշարի առաջին վարկածները եւ ապրանքային նշանների եւ ֆիրմային անվանումների ենթահամակարգերի երկրորդ վարկածները: Գյուտերի եւ օգտակար մոդելների փորձագետի ավտոմատացված աշխատանքային տեղի ձեւը բերված է նկ. 4-ում: Ելից եւ մտից նամակների գործավարության օպերատորի ավտոմատացված աշխատանքային տեղերի ձեւերը բերված է նկ. 5-ում եւ 6-ում :

Վարչությունը ձեռք է բերել աշխատանքային գրաֆիկական կայաններ՝ Compaq Deskpro EXS Intel Pentium III 1GHz/133MHz Minitower (1հատ), Compaq Deskpro EN Intel Pentium III 1GHz/133MHz Minitower (3 հատ) եւ համակարգչային օժանդակ սարքեր եւ սարքավորումներ: Որոշ ստորաբաժիններում ցանցային արագությունը 10 Mb/վրկ-ից հասցվել է 100 Mb/վրկ-ի:

Բաժնի մասնագետներից երկուսը մասնակցել են Եվրոպական արտոնագրային գերատեսչության կողմից Վիեննայում կազմակերպված «Արդյունաբերական սեփականության մասին տեղեկատվությունը ինտերնետում, լազերային սկավառակներով (ներառյալ MIMOSA ծրագրում) եւ օնլայն տվյալների հիմնապաշարում» եւ Թբիլիսիում՝ «INPADOC» տվյալների հիմնապաշարի օգտագործումը» թեմաներով սեմինարներին:

ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ԵՎ ՁԻՋՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն Հայարտոնագիրը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2001թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 64 պայմանագրեր, որոնցից 59-ը՝ 162 ապրանքային նշանների զիջման մասին, երեքը՝ 3 ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին եւ երկուսը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու ժամանակաշրջանում Հայարտոնագիրը շարունակել է արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները: Վերոհիշյալի կապակցությամբ վերամշակվել եւ սահմանված կարգով պետական գրանցում են ստացել՝ «Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության բողոքարկման խորհրդի կանոնադրությունը» եւ «ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի հաշվառման եւ գանձման կարգը»:

Եվրահամայնքի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ «Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի» (ԳՀՀ) շրջանակներում շարունակվել են արդյունաբերական սեփականության օբյեկտներին առնչվող ՀՀ օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերը Եվրահամայնքի օրենսդրությանը համապատասխանեցնելու հետ կապված նախապատրաստական աշխատանքները: Շարունակվել են նաեւ աշխատանքները «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը «Արտոնագրային իրավունքի մասին Համաձայնագրի» (PLT) դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Իր իրավասության շրջանակներում վարչությունը մասնակցել է ՀՀ վարչապետի եւ ՀՀ կառավարության հանձնարարականներով ստացված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծերի քննարկմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայարտոնագրի միջազգային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ աշխատանքային համագործակցության զարգացումն ու ամրապնդումը, մասնակցությունը տարբեր միջազգային պայմանագրերին եւ համաձայնագրերին, Հայարտոնագրի աշխատակիցների որակավորման բարձրացումն օտարերկրյա եւ միջազգային արտոնագրային գերատեսչություններում ուսուցման եւ որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաեւ երկկողմ եւ բազմակողմ կապերի զարգացումը ԱՊՀ երկրների ու օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

2001 թ. ընթացքում Հայարտոնագրի 17 մասնագետներ մասնակցել են ՄՄՀԿ աշխատանքային մարմինների առավել կարեւոր նիստերին, ինչպես նաեւ TACIS եւ ICON ծրագրերի շրջանակներում ԵԱԳ կազմակերպած սեմինար-

ներին, որոնք անցկացվել են Ժնեւում, Մյունխենում, Վիեննայում, Հաագայում, Սոֆիայում, Թբիլիսիում, Մոսկվայում եւ Տաշքենտում:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչության երկու աշխատողներ որակավորման բարձրացման նպատակով 15 օրով վերապատրաստվել են Եվրասիական արտոնագրային գերատեսչությունում (Մոսկվա), որտեղ ՀՀ-ի քվոտաների հաշվին աշխատում են վարչության երեք փորձագետներ:

Միջազգային համագործակցության շրջանակներում վարչության աշխատողների գործուղումների հետ կապված բոլոր ծախսերը կատարվել են վերը նշված կազմակերպությունների կողմից:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրությանն անդամակցելու կապակցությամբ վարչության 2 աշխատողներ վերապատրաստվել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում (Ժնեւ):

Հաշվետու ժամանակաշրջանում վարչության երկու փորձագետներ 3 շաբաթով մասնակցել են Ժնեւում, Մյունխենում եւ Հաագայում կազմակերպված փորձագետների ուսուցողական ծրագրին: Ծրագիրը կազմակերպել եւ ֆինանսավորել էր ՄՄՀԿ-ի միջազգային ակադեմիան:

Վարչության մեկ մասնագետ Մոսկվայում մասնակցել է ԵԱԱԳ փորձագետների աշխատանքային խմբի III նիստին:

Վարչության պետ Ս. Ղանթարջյանը 2001թ. հոկտեմբերին ընտրվել է Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի փոխնախագահ, ինչի առթիվ ստացվել է ՄՄՀԿ գլխավոր տնօրեն Քամիլ Իդրիսի շնորհավորանքը: